ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ
1897-1937

ՄԱՀՎԱՆ ՏԵՍԻԼ

«Մահվան տեսիլ» բանաստեղծությունը Չարենցը գրել է 1920 թ. Երևանում, երբ երկիրը դեռևս ցնցումների մեջ էր: Չարենցի ճակատագիրը միշտ էլ անխզելիորեն կապված է եղել իր հայրենիքի ճակատագրին. իր Նաիրի երկրի ու ժողովրդի վիճակը նրա հոգում դրամատիկ ապրումներ էին արթնացնում: Լինելով հայրենիքի ցավի ու ողբերգության ականատեսն ու մշտարթուն տարեգիրը՝ բանաստեղծը մտահոգ էր նրա բախտի համար ու սրտի դողով էր հետևում նրա փոթորկուն օրերի ալեկոծումներին.

Որպես լքված թավջութակի ծգված մի լար՝
Դողում է սիրտս կարոտով մի ահարկու...

Բանաստեղծը փորձում էր մշուշապատ իրականության մեջ շոշափել նաիրյան *«պայծառ գալիքը»:* Եվ *«տխուր այս օրերում»,* երբ իր հոգու լուսավոր առավոտները ինչ-որ մեկի դաժան երազանքով դարձել էին *«մի անկրակ իրիկնաժամ»*, նա ինքնամեղադրական անողոք մի դատավճռով փորձում է իր մեջ փնտրել պատճառը.

Գուցե այդ ե՛ս եմ, որ սրտով իմ լուսնահար
Ոչ մի կրակ հեռուներից ձեզ չբերի,
Ու ցանկացա, որ չօրհներգե ո՛չ մի քնար
Լուսապսակ, պայծառ գալիքը Նայիրի...

Եվ բանաստեղծի նաիրյան «երազի վերջին» սիրուց ծնվում է ինքնազոհաբերման անբեկանելի որոշումը, որի մեջ ուրվագծվում է իր երկրի լուսավոր ապագայի ու պայծառ օրերի մտապատկերը.

Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.
Եվ թող տեսնեն ի՛մ աչքերի մեջ կախվածի,
Իմ բո՛րբ երկիր, լուսապսակ քո ապագան:

Բանաստեղծությունը հայրենասիրության ու անձնազոհության բառակերտ հուշարձան է՝ Չարենցի անմնացորդ ինքնայրումը խորհրդանշող:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Կարդա՛ «Մահվան տեսիլ» բանաստեղծությունը:
2. Համացանցից գտի՛ր և ունկնդրի՛ր բանաստեղծությունը Ազատ Գասպարյանի կատարմամբ: **Հղումը՝** https://www.youtube.com/watch?v=c3C-8_synzI&t=37s
3. Ընթերցանությունից և ունկնդրումից հետո ներկայացրո՛ւ զգացողություններդ՝ լրացնելով աղյուսակը:

Ինչ եմ տեսնում	**Ինչ եմ լսում**	**Ինչ եմ զգում**

4. Ներկայացրո՛ւ պատմական ժամանակաշրջանի նկարագիրը, նրա ազդեցությունը Չարենցի հոգեվիճակի և բանաստեղծության վրա:
5. Առանձնացրո՛ւ այն տողերը, որոնք ընդգծում են բանաստեղծի հոգեվիճակը:
6. Դո՛ւրս գրիր համատեքստային բառերը, ցո՛ւյց տուր, թե ինչ են արտահայտում, ի՞նչ զգացողություններ են կապված նրանց հետ:

Համատեքստային բառեր	**Նրանց կետ կապված զգացողություններ**

7. Ունկնդրի՛ր համանուն երգը: Երաժշտությունը՝ Արմեն Արևշատյանի: Ըստ քեզ՝ երգը որքանո՞վ է փոխանցում բանաստեղծության հույզերն ու տրամադրությունները: Հիմնավորի՛ր կարծիքդ:
8. Ներկայացրո՛ւ բանաստեղծության մեջ առկա տաղաչափական օրինաչափությունները:
9. Ցո՛ւյց տուր լեզվական օրինաչափություններն ու նրանց դերը շարժուն և անշարժ պատկերներ ստեղծելու հարցում, օրինակ՝ բացատրի՛ր, թե իմաստային ինչ երանգ է հաղորդում բանաստեղծությանը հարակատար դերբայի կիրառությունը:

10. Մեկնաբանի՛ր, թե ինչ լուծում է տալիս բանաստեղծը բարդ իրավիճակում, երբ հայրենիքի փրկությունը զոհեր է պահանջում:
11. Ըստ քեզ՝ քնարական հերոսի ինքնազոհաբերության մղումը արդյոք հավատ ներշնչող է: Հիմնավորի՛ր կարծիքդ:
12. Մեկնաբանի՛ր բանաստեղծության գաղափարը: Ի՞նչ է փոխանցում մեզ հայրենասեր գրողը:
13. Ներկայացրո՛ւ Չարենցի բերած տաղաչափական նորությունները:
14. Քո ուսումնասիրած ստեղծագործություններից դո՛ւրս գրիր բանաստեղծի կիրառած մոտավոր հանգերի օրինակներ:

Ստեղծագործությունը	**Մոտավոր հանգի օրինակները**
«Մահվան տեսիլ»	
«Պատմության քառուղիներով»	
«Դանթեական առասպել»	
«Վահագն»	

15. Համեմատի՛ր «Պատմության քառուղիներով» պոեմը և «Մահվան տեսիլ» բանաստեղծությունը: Մեկնաբանի՛ր, թե որ ստեղծագործությունն է տոգորված հայրենիքի ապագայի նկատմամբ հավատով և ինչու: Առանձնացրո՛ւ կարծիքդ հիմնավորող տողերը: